

## **Երևանի Օրհուս կենտրոնի 2012թ. կատարած աշխատանքների տարեկան հաշվետվություն**

Կենտրոնի 2012թ. աշխատանքները կազմակերպվել են ՀՀ Օրհուս կենտրոնների գործունեության ուղղությունների և իրականացվելիք մեթոդների համաձայն, որոնք հիմնականում նպատակաուղղված են եղել հանրությանը բնապահպանական խնդիրների և նրանց Օրհուսի կոնվենցիայով սահմանված առողջ և բարեկեցիկ շրջակա միջավայրում ապրելու իրավունքի մասին իրազեկմանը, ինչպես նաև հասարակության արդյունավետ ներգրավմանը այդ խնդիրների լուծման և ռազմավարական որոշումների կայացման գործընթացին:

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնն իրականացրել է Երևան քաղաքի շրջակա միջավայրի բաղադրիչների վերաբերյալ տվյալների հավաքագրում և բազայավորում: Կատարվել են Երևան քաղաքի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի արտանետումների և քաղաքի ջրային օբյեկտների աղտոտվածության տվյալների վերլուծություններ՝ համաձայն Հայէկոմոնիտորինգի տվյալների, ինչպես նաև կոշտ կենցաղային և արդյունաբերական թափոնների ծավալի և մի շարք այլ վերլուծություններ: Առկա տեղեկատվությունը տրամադրվել է հասարակությանը ըստ պահանջի:

Տեղեկատվությունը հանրությանը առավել մատչելի դարձնելու նպատակով կազմակերպվել են մի շարք իրազեկման սեմինարներ հանրության տարբեր շերտերի ներկայացուցիչների համար և տեղեկատվություն ստանալու հարցումներ են ուղղվել մի շարք պետական կառույցների:

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի կողմից իրականացվել է Օրհուսի կոնվենցիայի և կոնվենցիայով սահմանված իրավունքների մասին լուսաբանում 3 բարձրագույն ուսումնական հաստատությունների՝ Երևանի Ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի, Հայաստանի Պետական Ճարտարագիտական Համալսարանի և ՀՀ ԱԻՆ Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի ուսանողների, ՀՀ ԳԱԱ երկրաբանության ինստիտուտի էկոլոգիական ակումբի, կենտրոնի այցելուների շրջանում: Ներկայացվել է ոչ միայն Կոնվենցիայով սահմանված իրենց իրավունքները, այլ բնապահպանների ձեռքբերումների դրական օրինակները, որոնք ապացուցում են այն մասին, որ, եթե լինեն միասնական, գործեն գրազետ, միևնույն ժամանակ

գիտակցեն ու հասկանան իրենց իրավունքները, ապա հաջողությունը կլինի իրենց կողմը՝ ի շահ բնության:

Տարվա սկզբին կենտրոն են դիմել Չարենց փողոցի բնակիչները, իրենց բնակավայրերին մոտ գտնվող և իրենց առողջությանը վնաս պատճառող բենզալցակայանի ապամոնտաժման հարցում աջակցելու ակնկալիքով: Կենտրոնի աշխատակիցների և Օրհուս կենտրոնների իրավախորհրդատուի կողմից խորհրդատվություն է տրամադրվել բնակիչներին, իրենց՝ առողջ եւ բարեկեցիկ շրջակա միջավայրում ապրելու սահմանադրական իրավունքի վերաբերյալ, աջակցություն է ցուցաբերվել վերջիններիս տարբեր իրավասու մարմիններին դիմումներ ուղղելու գործում, կենտրոնը նույնպես դիմումներ է ուղղել Երևանի քաղաքապետին և «Կենտրոն» վարչական շրջանի ղեկավարին: Կենտրոնի միջոցով խնդիրը հնչեղություն է ստացել, բազմաթիվ հոդվածներ և լուսաբանումներ են եղել մամուլում ու համացանցում: Ներկայումս այս հարցը գտնվում է դատական գործընթացում:

*2012թ. ընթացքում կենտրոնի նախաձեռնությամբ իրականացվել է տեղեկատվության մատչելիությանն ուղղված 14 միջոցառում:*

2012թ. առաջին կեսին ինչպես մնացած Օրհուս կենտրոնների, այնպես էլ Երևանի Օրհուս կենտրոնի կողմից իրականացվել է բնապահպանական տեղեկատվության պահանջարկի ուսումնասիրություն՝ բնապահպանական տեղեկատվության հավանական սպառողների շրջանում, որը նպատակ է ունեցել բացահայտելու հասարակության տեղեկացվածության աստիճանը բնապահպանական խնդիրների նկատմամբ, գնահատելու նրանց կողմից ստացված տեղեկատվության հավաստիությունը, օպերատիվությունը, ինչպես նաև բացահայտելու ու պարզաբանելու մեր երկրում բնապահպանական գործունեությանն առնչվող մի շարք այլ հարցեր: Փորձագետի աջակցությամբ կազմված հարցաշարերի օգնությամբ իրականացվել են հարցումներ տարբեր սեռերի և տարիքային խմբերի, տարբեր մասնագիտությունների տեղի մարդկանց շրջանում (ընդհանուր առմամբ 70 մարդ): Այս գործընթացը նպաստել է կենտրոնի կողմից մատուցված ծառայությունների ուղիների բարելավմանը, բնապահպանական տեղեկատվության հասանելիության առավել հեշտացմանը: Հարցումների արդյունքներից նաև ամփոփվել են կենտրոնի գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ հարցվածների առաջարկությունները, որոնցից որոշները հաշվի են առնվել կենտրոնի տարեկան ծրագրերի իրականացման

ընթացքում, հետագա գործունեության ընթացքում նույնպես կենտրոնը կուղղորդվի դրանցով:

Էկոկրթությունը և էկոդաստիարակությունը միշտ իր ուրույն տեղն է գրավել կենտրոնի գործունեության մեջ: Այս տարի նույնպես մի շարք աշխատանքներ են տարվել այդ ուղղությամբ, որոնցից հարկ է նշել համագործակցությունը ԳԱԱ երկրաբանական թանգարանի և էկոակումբի հետ: Տարբեր լսարանների համար համատեղ կազմակերպվել են գիտակրթական և մշակութային մի շարք միջոցառումներ: Կենտրոնի և թանգարանի միջև ստորագրվել է փոխհամագործակցության համաձայնագիր:

Հաշվետու տարում կենտրոնն իրականացրել է թվով 5 էկոկրթական միջոցառում

Օրհուս կենտրոններն իրենց գործունեությամբ նպաստում են շրջակա միջավայրի վերաբերյալ ընդունվող որոշումների գործընթացին հասարակության մասնակցությանը, դրանով իսկ աջակցելով պետական մարմիններին այս ոլորտի թափանցիկ կառավարմանը:

Ընթացիկ տարվա ընթացքում կենտրոնն համագործակցելով ՀՀ բնապահպանության նախարարության և ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Տեսչական բարեփոխումներ» թիմի հետ, իրականացրել է «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության կողմից ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի փաթեթի վերաբերյալ հանրային քննարկում, ապահովելով շահագրգիռ բոլոր կողմերի, այդ թվում նաև բիզնես սեկտորի ներկայացուցիչների մասնակցությունը: Քննարկման արդյունքում կազմվել է արձանագրություն և հնչեցված բոլոր առաջարկությունները, կարծիքները, դիտողությունները ներկայացվել են նախագիծն իրականացնող մարմնին, որոնց գերակշռող մասն ներառվել են նախագծում:

Կենտրոնն իրականացրել է նաև ՀՀ «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծի վերաբերյալ աշխատանքային քննարկում: Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ քննարկվել է նախագիծը, վերջիններիս կողմից ներկայացված բոլոր դիտողություններն, առաջարկություններն ու կարծիքները ներկայացվել են նախագիծն իրականացնող մարմնին՝ ՀՀ բնապահպանության նախարարությանը: Դրանց մեծ մասն ընդգրկվել են նախագծի վերջնական տարբերակում: Այս նախագիծը դեռ գտնվում է քննարկման փուլում:

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնն աջակցել է հետևյալ ՇՄԱԳ նախագծերի հասարակական լուսմներին.

- «Սոթքի ոսկու բացահանքի շահագործման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ» (ՇՄԱԳ)
- Թեժսարի նեֆելինային սիենիտների հանքավայրի շահագործման նախագծի (ՇՄԱԳ)
- Թուխմանուկի հարստացուցիչ ֆարրիկայի նոր պոչամբարի նախագծի (ՇՄԱԳ)

Կենտրոնը աջակցել է նաև հասարակության մասնակցությանը Երևանի Կիրովի անվան զբոսայգու վերակառուցման նախագծի քննարկմանը: Նախագիծը տեղադրվել է Օրհուս կենտրոնների կայքում, նախագծի վերաբերյալ հանրության կողմից կատարված առաջարկությունները քննարկվել են քաղաքապետարանի կողմից, որոնց գերակշիռ մասն ընդունվել է:

Այս տարի առաջին անգամ ձևավորվել է Երևանի քաղաքապետարանին կից էկոլոգիական խորհուրդը, որի կազմում ընդգրկված են մի շարք ՀԿ-ներ, գիտական և այլ կազմակերպություններ, որոնց թվում է նաև Երևանի Օրհուս կենտրոնը: Մինչ այժմ տեղի է ունեցել խորհրդի երեք նիստ: Հանձնաժողովի աշխատանքները նպաստում են ՏԻՄ-ի և հասարակական կառույցների միջև փոխհամագործակցությանը: Կենտրոնի համակարգողն ակտիվորեն մասնակցում է հանձնաժողովի նիստերին և հանրությանն հուզող մի շարք հարցեր է ներկայացրել հանձնաժողովի քննարկմանը:

Մեր երկրում շատ հաճախ խախտվում է որոշումներ ընդունման վաղ փուլերում հասարակության մասնակցության իրավունքը և հասարակությունը ստիպված է լինում պայքարել արդեն ընդունված որոշումների դեմ: Նման վառ օրինակ է ընթացիկ տարվա սկզբին Մաշտոցի պուրակում խանութների և կրպակների շինարարական աշխատանքների մասին թույլատվությունների տրամադրումը Երևանի քաղաքապետարանի կողմից, որը հակասում էր քաղաքի բնակչության օրինական շահերին՝ և՛ գլխավոր հատակագծի, և՛ գոտիավորման նախագծի պահանջներին:

Հասարակությանը անհանդուրժողականության արդյունքում ձևավորվեց հանրային սեփականության և ազգային հարստության պաշտպանության համար պայքարող քաղաքացիական ակտիվիստական նախաձեռնություն, ովքեր հստակ պատկերացնում էին իրենց իրավունքներն ու ազատությունները, այդ թվում՝ որոշումների կայացմանը

մասնակցելու և առողջ, պաշտպանված ու բարեկեցիկ շրջակա միջավայրում ապրելու իրենց իրավունքը:

Պայքարի հենց առաջին օրվանից կենտրոնը ձեռնամուխ եղավ շարժման ակտիվացմանը՝ իրազեկելով քաղաքացիական հասարակությանը խնդրի վերաբերյալ և ներգրավելով նրանց ձևավորվող պայքարի գործընթացին, միաժամանակ Հայաստանի Օրիուս կենտրոնները իրենց ակտիվ մասնակցությունը, աջակցությունը և գորակցությունը ցուցաբերեցին շարժմանը և շարժման մասնակից ակտիվիստներին:

Քաղաքացիական հասարակության եռամսյա պայքարի արդյունքում ի վերջո Երևանի քաղաքապետարանը Մաշտոցի պողոտային հարող զբոսայգու տարածքում անօրինական կառույցների ապամոնտաժման որոշում ընդունեց:


Կենտրոնը, էկոլոգիական հասարակական դաշինքի հետ համատեղ քայլեր ձեռնարկեց նաև քաղաքապետարանի մեկ այլ որոշման՝ Նորագավիթի այգիների հաշվին ֆուտբոլի դաշտի կառուցման դեմ, որոնց արդյունքում քաղաքապետարանը Ֆուտբոլի ազգային ֆեդերացիային մարզադաշտ կառուցելու համար, մեկ այլ՝ ոչ ծառապատ տարածքում հողհատկացման որոշում ընդունեց:

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնն աշխատանքներ է տարել նաև Փոքր ՀեԿ-երի շրջակա միջավայրի վրա ազդեցության, դրանց դրական և բացասական հետևանքների պարզաբանման ուղղությամբ: Մի շարք հարցումներն են ուղղվել տարբեր պետական մարմիններին, կազմակերպվել են քննարկումներ, մամլո ասուլիսներ: Բացահայտվել են արդեն գործող ՓՀԿ-երի բացասական հետևանքները շրջակա միջավայրի վրա, միաժամանակ փորձ է կատարվել պարզաբանել դրանց համապատասխանությունը մեր երկրի որդեգրած կայուն զարգացման քաղաքականությանը:

Կենտրոնը հանդիսացավ ռեսուրս կենտրոն և գործընկեր կազմակերպություն «Մենք կարող ենք», կամ «Հայաստանն առանց աղբի» ծրագրի համար: Ծրագրի 6 ամիսների ընթացքում (մարտ-սեպտեմբեր) կենտրոնն աջակցեց շարժմանը, ինչպես նաև սեպտեմբերի 15-ին մասնակցեց համահայկական բնապահպանական ակցիային: Երևանի և Գավառի ՕԿ-ների 40 կամավորների մասնակցությամբ ակցիան իրականացվեց Սևան Ազգային պարկի տարածքում:

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնում և կենտրոնի նախաձեռնությամբ տեղի է ունեցել 38 միջոցառում, որոնց մասնակցել են ընդհանուր թվով 685 մարդ:

Հաշվետու տարում կենտրոնում տեղի ունեցած միջոցառումները ըստ ուղղվածությունների՝



Կենտրոնի աշխատակիցների կողմից ամենօրյա աշխատանք է տարվում կենտրոնի այցելուների հետ՝ տեղեկատվության, խորհրդատվության և մի շարք այլ ծառայությունների տրամադրում:

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի ծառայություններից օգտվողների թիվը ըստ ծառայությունների տեսակների հետևյալն է.

| գրադարան | տեսադարան | տպիչ,պատճ. | Համակարգիչ, ինտերնետ | խորհրդատվություն | Ընդամենը | տարածքի տրամադրում |
|----------|-----------|------------|----------------------|------------------|----------|--------------------|
| 54       | 25        | 80         | 75                   | 152              | 386      | 10                 |

Կենտրոնի այցելուների թիվը կազմել է 386 մարդ, իսկ կենտրոնի տարածքը այլ կազմակերպությունների բնապահպանական միջոցառումների անցկացման նպատակով տրամադրվել է 10 անգամ:

Հաշվետու ժամանակահատվածում համալրվել է կենտրոնի գրադարանը և ֆիլմադարանը:

Կենտրոնը իրականացնում է ամենօրյա աշխատանք՝ [www.aarhus.am](http://www.aarhus.am) կայքի տեղեկատվության հավաքագրում և տեղադրում կայքում: Կայքի այցելուների թիվը կազմել է 300 000:

Կենտրոնում տեղի է ունեցել Օրիուս կենտրոնների համակարգողների 5 աշխատանքային հանդիպումներ, հիմնականում հստակեցվել են գործունեության ուղղությունները, քննարկվել են տարեկան աշխատանքային պլանների ձևաչափերը և մի շարք այլ հարցեր, ինչպես նաև հրավիրվել են տարբեր բնագավառերի փորձագետներ, որոնց կողմից անցկացվել են ուսուցողական դասընթացներ կենտրոնների համակարգողների համար:

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի աշխատակիցները մասնակցել են բազմաթիվ հանդիպումների, քննարկումների, սեմինարների և կոնֆերանսների, համալրել իրենց գիտելիքները Շրջակա միջավայրի հարցերի շուրջ: Կենտրոնը ակտիվ համագործակցում է շրջակա միջավայրի պահպանության հարցերով զբաղվող միջազգային, պետական և ոչպետական կառույցների, գիտական, բիզնես և ՋԼՄ սեկտորի ներկայացուցիչների հետ:

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի գործունեության վերաբերյալ լուսաբանումներ են եղել մի շարք հեռուստաընկերություններով, Հանրային ռադիոյով, կայքերով և այլ լրատվամիջոցներով:

Կենտրոնի գործունեությունը մանրամասն ներկայացվում է [www.aarhus.am](http://www.aarhus.am) կայքում: